# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/9

ք. Երևան «03» 02 2025թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԱՌԻԼԱՆԵՐ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Էդգար Գալստյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակությունների ընդունելության համար /հյուրասիրության կազմակերպման/ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները համապատասխան Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները

հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար – գլխավոր քարտուղար՝**
**Դավիթ Առաքելյան**

---------------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«ՊԱՈՒԼԱՆԵՐ» ՍՊԸ**
**ՀՀ, ք.Երևան, Բուզանդ փ. 17շ. 236**
**ՀՎՀՀ՝ 02694241**
**«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 2140006623190100**
**Տնօրեն՝**
**Էդգար Գալստյան**

---------------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*« 03 » 02 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | ընդհանուր առավելագույն գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը* |
| 1 | 79111200/1 | Պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի՝ Տաք և սառը խորտիկներ, Տաք ուտեստներ և ապուրներ, Տաք և զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական), Ալկոհոլային խմիչքներ և կոկտեյլներ, Աղցաններ, խավարտներ, աղանդեր (խմորեղեն), միրգ և այլն: Ծառայությունների գինը պետք է ներառի Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Մասնակիցը գնային առաջարկին կից պետք է ներկայացնի նաև ընդհանուր մենյուն՝ ըստ առավելագույն գների, համաձայն Հավելված 1.1-ի:** Ծառայությունների մատուցումը պետք է ներառի ընկերության ենթակայությամբ գործող (առկայության դեպքում) սննդի մատուցման բոլոր հաստատությունները: | դրամ | 2000000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Բուզանդ 17 231/236 տարածք | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2025թ. դեկտեմբերի 25-ը ներառյալ: |

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը ներառյալ:*
*** Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար – գլխավոր քարտուղար՝**
**Դավիթ Առաքելյան**

______________________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ՊԱՈՒԼԱՆԵՐ» ՍՊԸ**
**ՀՀ, ք.Երևան, Բուզանդ փ. 17շ. 236**
**ՀՎՀՀ՝ 02694241**
**«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 2140006623190100**
**Տնօրեն՝**
**Էդգար Գալստյան**

______________________________
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1.1*
*«      »            2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի*

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՆՅՈՒՆ՝ ԸՍՏ ԳՆԵՐԻ

*ՀՀ դրամ*

## Խոհանոց

| | | |
|---|---|---|
| Նախաճաշ | | 0.00 |
| Ձվածեղ բաստուրմայով | բաժին | 2,000.00 |
| Ակնիկ | բաժին | 1,000.00 |
| Ձվածեղ բեկոնով | բաժին | 1,900.00 |
| Ձվածեղ խոզապուխտով և պանրով | բաժին | 1,900.00 |
| Ձվածեղ | բաժին | 1,000.00 |
| Ռոլլ սերուցքային պանրով և լոլիկով | բաժին | 2,400.00 |
| Ձվածեղ Լոլիկով | բաժին | 1,700.00 |
| Ձվածեղ կանաչիով | բաժին | 1,700.00 |
| Կրուտոններ մեղրով | բաժին | 1,500.00 |
| Հնդկաձավար սաղմոնով և ակնիկով | բաժին | 3,800.00 |
| Բենեդիկտ սաղմոնով և ավոկադոյով | բաժին | 3,500.00 |
| Նրբաբլիթ հորթի մսով | բաժին | 2,300.00 |
| Բրուսկետա պաշոտ ձվով և ավոկադոյով | բաժին | 2,500.00 |
| Սարդելկա կարտոֆիլի խյուսով | բաժին | 2,000.00 |
| Վարսակի շիլա հատապտուղներով | բաժին | 1,800.00 |
| Քամած մածուն հատապտուղներով և մուրաբայով | բաժին | 1,500.00 |
| Կաթնաշոռով բլիթներ | բաժին | 2,800.00 |
| Փանքեյք նուտելայով և բանանով | բաժին | 2,400.00 |
| Փանքեյք հատապտուղներով և  մեղրով | բաժին | 2,200.00 |
| Սառը խորտիկներ | | 0.00 |
| Թարմ կանաչի | բաժին | 1,800.00 |
| Բանջարեղենային փունջ | բաժին | 3,000.00 |
| Բուռատա պեստո սոուսով և լոլիկով | բաժին | 5,200.00 |
| Կարմիր պղպեղ մարինացված | բաժին | 1,500.00 |
| Տնական թթու | բաժին | 2,200.00 |
| Հայկական պանրի տեսականի | բաժին | 2,400.00 |
| Քամած մածուն | բաժին | 1,100.00 |
| Ռեժան | բաժին | 1,400.00 |
| Պանրի տեսականի գինու հետ | բաժին | 6,000.00 |
| Ձկան տեսականի | բաժին | 10,000.00 |
| Թարթար սաղմոնով | բաժին | 6,000.00 |
| Մսի տեսականի | բաժին | 6,000.00 |
| Բրուսկետա սաղմոնով | բաժին | 3,700.00 |
| Ղաուրմա | բաժին | 4,200.00 |
| Հումուս ավոկադոյով | բաժին | 2,800.00 |
| Մութաբալ | բաժին | 1,700.00 |
| Հումուս | բաժին | 1,700.00 |
| Համով դդմիկ | բաժին | 1,500.00 |
| Սմբուկի խավիար | բաժին | 1,300.00 |
| Լցոնած սմբուկ թթվասերով | բաժին | 2,100.00 |
| Լցոնած սմբուկ հումուսով | բաժին | 2,100.00 |
| Աղցաններ | | 0.00 |
| Բազուկ ընկույզով և պանրային մուսով | բաժին | 2,200.00 |

| | | |
|---|---|---|
| Ամառային աղցան | բաժին | 1,800.00 |
| Հունական աղցան | բաժին | 2,800.00 |
| Կապրեզե | բաժին | 4,500.00 |
| Թաբուլե | բաժին | 1,900.00 |
| Թաբուլե քինոայով | բաժին | 2,100.00 |
| Ավելուկով աղցան | բաժին | 1,300.00 |
| Կանաչ լոբով և բանջարեղենով աղցան | բաժին | 2,400.00 |
| Կաղամբով և պանրով աղցան | բաժին | 1,900.00 |
| Կեսար հավով | բաժին | 2,800.00 |
| Կեսար սաղմոնով | բաժին | 4,000.00 |
| Կեսար մանրածովախեցգետնով | բաժին | 3,400.00 |
| Գազարով և ֆետա պանրով աղցան | բաժին | 2,200.00 |
| Չերի լոլիկով և մացառելա պանրով աղցան | բաժին | 2,300.00 |
| Մանրածովախեցգետնով և գետնանուշով աղցան | բաժին | 3,000.00 |
| Պապրիկա աղցան | բաժին | 4,100.00 |
| Խրթխրթան աղցան | բաժին | 2,600.00 |
| Երևան աղցան | բաժին | 2,800.00 |
| Ջիջիլ աղցան | բաժին | 2,400.00 |
| Հավով աղցան | բաժին | 2,200.00 |
| Ապուրներ | | 0.00 |
| Նռով և գառի մսով ապուր | բաժին | 2,200.00 |
| Բորշչ | բաժին | 2,200.00 |
| Սոլյանկա | բաժին | 2,100.00 |
| Պուտուկ տավարի մսով | բաժին | 2,100.00 |
| Պուտուկ գառի մսով | բաժին | 2,100.00 |
| Խարչո | բաժին | 2,100.00 |
| Հավով ապուր | բաժին | 1,300.00 |
| Սնկապուր | բաժին | 1,300.00 |
| Ավելուկով ապուր | բաժին | 1,300.00 |
| Թանապուր | բաժին | 1,200.00 |
| Հարիսա | բաժին | 1,500.00 |
| Դդումով կրեմ ապուր | բաժին | 1,700.00 |
| Բրոկոլիով կրեմ ապուր | բաժին | 1,600.00 |
| Տաք Ուտեստներ | | 0.00 |
| Տավարի սրունք | բաժին | 30,000.00 |
| Հավի կրծքամիս սնկային սոուսով | բաժին | 2,400.00 |
| Հավի կրծքամիս շաֆրանի սոուսով | բաժին | 3,000.00 |
| Հավի կրծքամիս հումուսով և ազնվամորու սոուսով | բաժին | 2,600.00 |
| Հավի կրծքամիս բուլղարական պղպեղով և կանաչ ձիթապտղով | բաժին | 2,800.00 |
| Տնական հավ շիլայով | բաժին | 7,500.00 |
| Խոբոբ հավի մսով | բաժին | 5,200.00 |
| Կաղամբով տոլմա | բաժին | 2,600.00 |
| Տոլմա ամառային | բաժին | 3,300.00 |
| Խաղողի թփով տոլմա | բաժին | 2,800.00 |
| Տավարի մաչա | բաժին | 5,000.00 |
| Տավարի սթեյք բանջարեղենով | բաժին | 7,000.00 |
| Հորթի թուշ | բաժին | 5,200.00 |
| Տավարի մատ Ջիջիլ | բաժին | 4,800.00 |
| Ջիջիլ կողիկներ հավաքածու | բաժին | 21,000.00 |
| Քուֆթա թարխունով | բաժին | 3,400.00 |
| Տավարի տժվժիկ | բաժին | 2,300.00 |
| Հավով չախոբիլի | բաժին | 4,200.00 |
| Գառան խաշլամա | բաժին | 4,400.00 |

| | | |
|---|---|---|
| Ճուտ տապակած | բաժին | 2,500.00 |
| Արիշտա մանրածովախեցգետնով | բաժին | 2,600.00 |
| Ռիբս | բաժին | 5,000.00 |
| Ղափամա | բաժին | 6,000.00 |
| Խուրջին | բաժին | 4,700.00 |
| Գառան թիակ տոմատի մեջ | բաժին | 17,000.00 |
| Գառան մաչա | բաժին | 9,000.00 |
| Թագ | բաժին | 16,000.00 |
| Տավարի մատը կրակի մեջ | բաժին | 25,000.00 |
| Հորթի չալաղաջ | բաժին | 16,000.00 |
| Լցոնած սունկ | բաժին | 2,500.00 |
| Տավարի ոսկրածուծ | բաժին | 4,000.00 |
| Տապակած սունկ կարտոֆիլով | բաժին | 1,500.00 |
| Օջախուրի | բաժին | 2,800.00 |
| Խավարտներ | | 0.00 |
| Լոբի տապակած | բաժին | 2,300.00 |
| Տապակած սպանախ | բաժին | 2,100.00 |
| Բրինձ | բաժին | 800.00 |
| Կարտոֆիլի խյուս | բաժին | 800.00 |
| Գյուղական կարտոֆիլ | բաժին | 800.00 |
| Հնդկաձավար | բաժին | 800.00 |
| Ձկնային Ուտեստներ | | 0.00 |
| Թառափի խորոված | կգ | 10,000.00 |
| Իշխան շոգեխաշած | բաժին | 6,000.00 |
| Իշխանի խորոված | բաժին | 5,700.00 |
| Թառափի խորոված կտորներով | բաժին | 6,000.00 |
| Մանրածովախեցգետնի խորոված | բաժին | 4,500.00 |
| Իշխանի ֆիլե | բաժին | 5,700.00 |
| Սաղմոնի սթեյք | բաժին | 8,500.00 |
| Իշխան կրակի մեջ | բաժին | 14,000.00 |
| Խորոված | | 0.00 |
| Հնդկահավի հավաքածու | բաժին | 21,000.00 |
| Խոզի չալաղաջ | բաժին | 4,500.00 |
| Խոզի մատ | բաժին | 3,900.00 |
| Խոզի փափուկ | բաժին | 3,200.00 |
| Խոզի վիզ | բաժին | 3,400.00 |
| Տավարի սիրտ-թոք | բաժին | 2,400.00 |
| Տավարի սուկի | բաժին | 6,000.00 |
| Տավարի ֆիլե խորոված | բաժին | 4,400.00 |
| Գառան խառը խորոված | բաժին | 3,600.00 |
| Գառան չալաղաջ | բաժին | 4,400.00 |
| Գառան մատ | բաժին | 4,000.00 |
| Ճուտ խորոված | բաժին | 2,500.00 |
| Հավի խորոված | բաժին | 2,500.00 |
| Տավարի խորոված տորթ | բաժին | 5,500.00 |
| Խորոված քուֆթա | բաժին | 3,000.00 |
| Խորոված դոլմա | բաժին | 3,000.00 |
| Ջիջիլ խորովածի հավաքածու | բաժին | 33,000.00 |
| Բանջարեղենի գրիլ | բաժին | 5,000.00 |
| Սնկի խորոված | բաժին | 1,500.00 |
| Սուլուգունի խորոված | բաժին | 1,500.00 |
| Բանջարեղենի խորոված | բաժին | 1,800.00 |
| Սոխի խորոված | բաժին | 600.00 |

| | | |
|---|---|---|
| Կարտոֆիլի պլեճ | բաժին | 700.00 |
| Կծու պղպեղի խորոված | բաժին | 600.00 |
| Լոլիկի խորոված | բաժին | 800.00 |
| Քաբաբ | | 0.00 |
| Ջիջիլ քաբաբների հավաքածու | բաժին | 20,000.00 |
| Հավի քաբաբ հոլանդական պանրով | բաժին | 2,100.00 |
| Տավարի քաբաբ | բաժին | 2,600.00 |
| Ջիջիլ քաբաբ փարդայով | բաժին | 4,500.00 |
| Գառան իքիբիր | բաժին | 2,500.00 |
| Գառան քաբաբ | բաժին | 2,700.00 |
| Մանրածովախեցգետնի քաբաբ | բաժին | 4,200.00 |
| Խմորային | | 0.00 |
| Փիդե տավարի մսով | բաժին | 1,700.00 |
| Փիդե սպանախով | բաժին | 2,200.00 |
| Փիդե պեպերոնի | բաժին | 2,500.00 |
| Փիդե մարգարիտա | բաժին | 1,900.00 |
| Լահմաջո տավարի մսով և պանրով | բաժին | 2,500.00 |
| Լահմաջո տավարի մսով | բաժին | 2,300.00 |
| Աջարական խաչապուրի | բաժին | 1,600.00 |
| Մերգելական խաչապուրի | բաժին | 2,600.00 |
| Աղանդեր | | 0.00 |
| Գավառի փախլավա | բաժին | 1,800.00 |
| Նապոլեոն | բաժին | 1,700.00 |
| Չիզքեյք | բաժին | 1,800.00 |
| Մեղրային տորթ | բաժին | 1,800.00 |
| Էկլեր | բաժին | 1,300.00 |
| Թոնրի գաթա | բաժին | 1,600.00 |
| Պաղպաղակով հալվա | բաժին | 1,600.00 |
| Մրգի տեսականի | բաժին | 6,500.00 |
| Սոուսներ | | 0.00 |
| Բարբեքյու սոուս | բաժին | 600.00 |
| Դեմիգլաս սոուս | բաժին | 600.00 |
| Լոլիկի սոուս | բաժին | 600.00 |
| Լուլա սոուս | բաժին | 600.00 |
| Կծու սոուս | բաժին | 600.00 |
| Մանանեխի սոուս | բաժին | 600.00 |
| Մեղրային սոուս | բաժին | 600.00 |
| Պեստո սոուս | բաժին | 1,200.00 |
| Սոուս սերուցքային պանրով | բաժին | 800.00 |
| Տերիյակի սոուս | բաժին | 700.00 |
| Կեսար սոուս | բաժին | 800.00 |
| Հաց | | 0.00 |
| Հացի զամբյուղ | բաժին | 500.00 |
| ***Ընդամենը*** | | ***690100*** |
| ***10% սպասարկում*** | | ***69010*** |
| ***Ընդհանուր*** | | ***759110*** |

## *Բար*

| Անվանում | | Չափման միավոր | ՀՀ դրամ |
|---|---|---|---|
| Ապերետիվ խմիչքներ | | | 0.00 |
| | Ապերոլ | բաժին | 1,900.00 |
| | Կամպարի | բաժին | 1,800.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | Մարտինի Ռոսսո | բաժին | 1,500.00 |
| | Մարտինի Էքստրադրայ | բաժին | 1,500.00 |
| | Մարտինի Բիանկո | բաժին | 1,500.00 |
| | Բեխերովկա | բաժին | 1,400.00 |
| Վիսկի | | | 0.00 |
| | Վիսկի Մակալլան 12 | բաժին | 8,000.00 |
| | Վիսկի Գլենլիվետ 18 | բաժին | 8,000.00 |
| | Վիսկի Գլենլիվետ 15 | բաժին | 5,000.00 |
| | Վիսկի Գլենֆիդիչ 15 | բաժին | 5,000.00 |
| | Վիսկի Չիվաս Ռեգալ 18 | բաժին | 5,000.00 |
| | Վիսկի Գլենֆիդիչ 12 | բաժին | 3,800.00 |
| | Վիսկի Մոնքեյ Շոլդեր | բաժին | 3,800.00 |
| | Վիսկի Գլենլիվետ 12 | բաժին | 3,500.00 |
| | Վիսկի Բլեք Լեյբլ | բաժին | 3,200.00 |
| | Վիսկի Չիվաս Ռեգալ 12 | բաժին | 2,800.00 |
| | Վիսկի Ջեք Դենիելս Խնձոր | բաժին | 2,600.00 |
| | Վիսկի Ջեք Դենիելս Հանի | բաժին | 2,600.00 |
| | Վիսկի Ջեք Դենիելս | բաժին | 2,500.00 |
| | Վիսկի Ջեյմսոն | բաժին | 2,300.00 |
| Ռոմ | | | 0.00 |
| | Բակարդի 8 | բաժին | 3,500.00 |
| | Ռոմ Անգուստուրա 7 | բաժին | 3,200.00 |
| | Բակարդի Կարտա Նեգրա | բաժին | 2,200.00 |
| | Բակարդի Կարտա Բլանկա | բաժին | 2,200.00 |
| | Բակարդի Սփայս | բաժին | 2,000.00 |
| Ջին | | | 0.00 |
| | Մանքի-47 | բաժին | 5,300.00 |
| | Հենդրիքս | բաժին | 3,000.00 |
| | Բոմբեյ Սապֆիր | բաժին | 2,100.00 |
| | Բիֆիտր | բաժին | 1,500.00 |
| Տեկիլա | | | 0.00 |
| | Դոն Խուլիո 1942 | բաժին | 15,000.00 |
| | Դոն Խուլիո Անեխո | բաժին | 6,000.00 |
| | Պատրոն Գոլդ | բաժին | 5,000.00 |
| | Դոն Խուլիո Բլանկո | բաժին | 4,500.00 |
| | Պատրոն Սիլվեր | բաժին | 4,200.00 |
| | Օլմեկա Գոլդ | բաժին | 2,100.00 |
| | Օլմեկա Բլանկո | բաժին | 1,900.00 |
| Օղի 50մլ | | | 0.00 |
| | Գրեյ Գուս 50մլ | բաժին | 3,000.00 |
| | Նալբանդյան 88 | բաժին | 2,000.00 |
| | Չիստիե Ռոսի 50մլ | բաժին | 1,900.00 |
| | Բելուգա Տրանսատլանտիկ 50մլ | բաժին | 1,900.00 |
| | Բելուգա 50մլ | բաժին | 1,800.00 |
| | Օնեգին 50մլ | բաժին | 1,800.00 |
| | Օհանյան Օրգանիկ 50մլ | բաժին | 1,700.00 |
| | Կրեմլին 50մլ | բաժին | 1,300.00 |
| | Օհանյան ICE 50մլ | բաժին | 1,300.00 |
| | Նալբանդյան 8 | բաժին | 1,300.00 |
| | Նալբանդյան for women | բաժին | 1,300.00 |
| | Ստոլի 50մլ | բաժին | 1,100.00 |
| | Աբսալյուտ 50մլ | բաժին | 1,100.00 |
| | Ֆինլանդիա 50մլ | բաժին | 1,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
| | Օհանյան 50մլ | բաժին | 900.00 |
| | Արխանգելսկայա 50մլ | բաժին | 850.00 |
| Կոնյակ | | | 0.00 |
| | Նաիրի 20 (50մլ) | բաժին | 7,000.00 |
| | Վասպուրական 15 (50մլ) | բաժին | 4,900.00 |
| | Դվին 50մլ | բաժին | 4,300.00 |
| | Ախթամար 10 50մլ | բաժին | 2,800.00 |
| | Արարատ Բալ 50մլ | բաժին | 2,600.00 |
| | Արարատ Մեղր 50մլ | բաժին | 2,600.00 |
| | Արարատ Ծիրան 50մլ | բաժին | 2,600.00 |
| Մրգային օղիներ | | | 0.00 |
| | Արալեզ Սև Թութ 50մլ | բաժին | 3,200.00 |
| | Արալեզ Հոն 50մլ | բաժին | 2,700.00 |
| | Արալեզ Սպիտակ Թութ 50մլ | բաժին | 2,600.00 |
| | Արալեզ Ծիրան 50մլ | բաժին | 2,300.00 |
| | Արալեզ Խաղող 50մլ | բաժին | 2,200.00 |
| | Արալեզ Սերկևիլ 50մլ | բաժին | 2,100.00 |
| | Արալեզ Վայրի Տանձ 50մլ | բաժին | 2,100.00 |
| | Արալեզ Տանձ 50մլ | բաժին | 2,100.00 |
| | Արալեզ Սև Սալոր 50մլ | բաժին | 2,100.00 |
| | Արցախ 3 50մլ | բաժին | 1,900.00 |
| | Արցախ 1 50մլ | բաժին | 1,750.00 |
| Լիկյոր | | | 0.00 |
| | Լիկյոր Իտալիկուս | բաժին | 2,600.00 |
| | Յագերմաստեր | բաժին | 1,800.00 |
| | Կահլուա | բաժին | 1,800.00 |
| | Լիմոնչելո | բաժին | 1,700.00 |
| | Բեյլիզ | բաժին | 1,700.00 |
| | Սամբուկա | բաժին | 1,700.00 |
| | Մալիբու | բաժին | 1,500.00 |
| Գարեջուր | | | 0.00 |
| | Պաուլաներ Օրիգինալ 0.3լ | բաժին | 1,522.00 |
| | Պաուլաներ Օրիգինալ 0.5լ | բաժին | 2,095.00 |
| | Պաուլաներ Օրիգինալ 1լ | բաժին | 3,885.00 |
| | Պաուլաներ Մուգ 0.3լ | բաժին | 1,522.00 |
| | Պաուլաներ Մուգ 0.5լ | բաժին | 2,095.00 |
| | Պաուլաներ Մուգ 1լ | բաժին | 3,885.00 |
| | Պաուլաներ Ցորեն 0.3լ | բաժին | 1,522.00 |
| | Պաուլաներ Ցորեն 0.5լ | բաժին | 2,095.00 |
| | Պաուլաներ Ցորեն 1լ | բաժին | 3,885.00 |
| | Հակեր-Փշոր Ոսկի 0.3լ | բաժին | 1,522.00 |
| | Հակեր-Փշոր Ոսկի 0.5լ | բաժին | 2,095.00 |
| | Հակեր-Փշոր Ոսկի 1լ | բաժին | 3,885.00 |
| | Հակեր-Փշոր Ցորեն 0.3լ | բաժին | 1,522.00 |
| | Հակեր-Փշոր Ցորեն 0.5լ | բաժին | 2,095.00 |
| | Հակեր-Փշոր Ցորեն 1լ | բաժին | 3,885.00 |
| Գարեջրի համար | | | 0.00 |
| | Պիստակ | բաժին | 2,000.00 |
| | Աղի գետնանուշ | բաժին | 1,300.00 |
| | Աղի ընդեղենի տեսականի | բաժին | 2,200.00 |
| Սուրճ | | | 0.00 |
| | Կապուչինո Բեյլիզ | բաժին | 2,200.00 |
| | Կապուչինո Նուշ | բաժին | 1,800.00 |

| | | |
|---|---|---|
| Կապուչինո կոկոս | բաժին | 1,800.00 |
| Գլյասե | բաժին | 1,800.00 |
| Ռաֆ սուրճ | բաժին | 1,700.00 |
| Լատե | բաժին | 1,600.00 |
| Դաբլ Էսպրեսո | բաժին | 1,600.00 |
| Կապուչինո | բաժին | 1,500.00 |
| Էսպրեսո | բաժին | 1,200.00 |
| Ամերիկանո | բաժին | 1,200.00 |
| Փարիզյան սուրճ | բաժին | 800.00 |
| Սև սուրճ | բաժին | 700.00 |
| Տաք շոկոլադ | բաժին | 1,500.00 |
| | | |
| Թեյ | | 0.00 |
| Թեյ նռան | բաժին | 2,500.00 |
| Թեյ չիչխանի | բաժին | 2,000.00 |
| Թեյ ցիտրուսային | բաժին | 2,000.00 |
| Թեյ հատապտղային | բաժին | 1,800.00 |
| Թարմ իմբիրով թեյ | բաժին | 1,800.00 |
| Թեյ իմբիր | բաժին | 1,500.00 |
| Թեյ մրգային | բաժին | 1,500.00 |
| Թեյ կանաչ | բաժին | 1,000.00 |
| Թեյ Ուրց/Նանա | բաժին | 1,000.00 |
| Թեյ Սև | բաժին | 1,000.00 |
| Թարմ քամած հյութեր | | 0.00 |
| Նռան ֆրեշ | բաժին | 3,000.00 |
| Թուրինջի ֆրեշ | բաժին | 2,000.00 |
| Նարինջի ֆրեշ | բաժին | 2,000.00 |
| Խնձորի ֆրեշ | բաժին | 1,800.00 |
| Գազարի ֆրեշ | բաժին | 1,300.00 |
| Զովացուցիչ Ըմպելիքներ | | 0.00 |
| 1լ.լիմոնադ մարակույա | բաժին | 4,000.00 |
| Ֆիրմային լիմոնադ մարակույա | բաժին | 2,300.00 |
| 1լ.լիմոնադ ցիտրուսային | բաժին | 3,500.00 |
| Ֆիրմային լիմոնադ ցիտրուսային | բաժին | 1,800.00 |
| 1լ.լիմոնադ հատապտղային | բաժին | 3,500.00 |
| Ֆիրմային լիմոնադ հատապտղային | բաժին | 1,800.00 |
| 1լ.լիմոնադ նանա+լայմ | բաժին | 3,000.00 |
| Ֆիրմային լիմոնադ նանա+լայմ | բաժին | 1,700.00 |
| Կոմպոտ | բաժին | 1,800.00 |
| Բանանի շեյք | բաժին | 1,800.00 |
| Ելակի շեյք | բաժին | 1,800.00 |
| Վանիլային շեյք | բաժին | 1,600.00 |
| Շոկոլադե շեյք | բաժին | 1,600.00 |
| Ռեդբուլ | շիշ | 1,600.00 |
| Սան Պելեգրինո | շիշ | 1,600.00 |
| Տոնիկ Թոմաս Հենրի | շիշ | 1,600.00 |
| Բնական հյութեր | բաժին | 800.00 |
| Աղբյուրի ջուր 0.33լ | շիշ | 500.00 |
| Հանքային ջուր 0.33լ | շիշ | 500.00 |
| Կոլա/Ֆանտա/Սպրայթ | շիշ | 500.00 |
| Դետոկս նեխուր | բաժին | 3,000.00 |
| Դետոկս նարինջի | բաժին | 2,500.00 |
| Մոխիտո (Ոչ ալկոհոլ) | բաժին | 1,900.00 |

| | | |
|---|---|---|
| Դետոկս խնձոր | բաժին | 1,800.00 |
| Ալկոհոլային կոկտեյլներ | | 0.00 |
| Ջիջիլ կոկտեյլ | բաժին | 4,000.00 |
| Մարտինի Սուպեր Սթար | բաժին | 4,000.00 |
| Մայ Թայ | բաժին | 3,700.00 |
| Աղիոս | բաժին | 3,500.00 |
| Ապերոլ Շպրից | բաժին | 3,500.00 |
| Լոնգ Այլենդ | բաժին | 3,500.00 |
| Կնքահայր | բաժին | 3,500.00 |
| Արարատ շպրից | բաժին | 3,500.00 |
| Ջին Ռեհան | բաժին | 3,100.00 |
| Կայպիրինյա | բաժին | 3,000.00 |
| Մանհեթեն | բաժին | 3,000.00 |
| Բուլվարիա | բաժին | 3,000.00 |
| Կոկտեյլ Վոդկա Սաուեր | բաժին | 3,000.00 |
| Մարգարիտա | բաժին | 2,800.00 |
| Մարգարիտա ելակի | բաժին | 3,000.00 |
| Նեգրոնի | բաժին | 2,800.00 |
| Պինա Կոլադա | բաժին | 2,800.00 |
| Կոկտեյլ Վիսկի Սաուեր | բաժին | 2,800.00 |
| Կոսմոպոլիտան | բաժին | 2,800.00 |
| Մոհիտո | բաժին | 2,800.00 |
| Տեկիլա Սանրայզ | բաժին | 2,700.00 |
| Օլդ Ֆեյշն | բաժին | 2,700.00 |
| Դայկիրի | բաժին | 2,600.00 |
| Բլադի Մերի | բաժին | 2,500.00 |
| Մոսկովյան մուլ | բաժին | 2,500.00 |
| Բ-53 | բաժին | 2,500.00 |
| Բ-52 | բաժին | 2,400.00 |
| Միմոզա | բաժին | 2,400.00 |
| Ջին տոնիկ | բաժին | 2,200.00 |
| Լիլեթ Շպրից | բաժին | 1,900.00 |
| Ռեզերվ | | 0.00 |
| Թարիրի կարասում կարմիր 750մլ | շիշ | 110,000.00 |
| Զորահ Երազ 750մլ | շիշ | 95,000.00 |
| Զորահ Սիրենի Հերմիտաժ 750մլ | շիշ | 52,000.00 |
| Թարիրի ռեզերվ 750մլ | շիշ | 42,000.00 |
| Հին Արենի ռեզերվ 750մլ | շիշ | 24,000.00 |
| Զորահ կարասի 750մլ | շիշ | 22,000.00 |
| Կուր ռեզերվ 750մլ | շիշ | 20,000.00 |
| Տակառ կարմիր Ռեզերվ 750մլ | շիշ | 18,000.00 |
| Գինի կարմիր/շիշ | | 0.00 |
| Թարիրի կարմիր750մլ | շիշ | 22,000.00 |
| Մխիթար Գոշ կարմիր 750մլ | շիշ | 15,000.00 |
| Սափոր կարմիր 750մլ | շիշ | 13,000.00 |
| Կատարո կարմիր 750մլ | շիշ | 13,000.00 |
| Փյուր Կարբո կարմիր750մլ | շիշ | 9,000.00 |
| Հին Արենի Կարմիր 750մլ | շիշ | 9,000.00 |
| Տակառ կարմիր 750մլ | շիշ | 9,000.00 |
| Կուր Կարմիր 750մլ | շիշ | 9,000.00 |
| Սարգոն Կարմիր 750մլ | շիշ | 8,500.00 |
| Գինի սպիտակ/շիշ | | 0.00 |
| Զորահ ոսկի 750մլ | շիշ | 24,000.00 |

| | | |
|---|---|---|
| Թարիրի սպիտակ 750մլ | շիշ | 16,000.00 |
| Մխիթար Գոշ սպիտակ 750մլ | շիշ | 14,000.00 |
| Սափոր սպիտակ 750մլ | շիշ | 12,500.00 |
| Տուս Սպիտակ 750մլ | շիշ | 9,500.00 |
| Կատարո սպիտակ 750մլ | շիշ | 9,000.00 |
| Կուր սպիտակ 750մլ | շիշ | 9,000.00 |
| Հին Արենի Սպիտակ 750մլ | շիշ | 8,500.00 |
| Տակառ սպիտակ 750մլ | շիշ | 8,500.00 |
| Սարգոն Սպիտակ 750մլ | շիշ | 8,000.00 |
| | | |
| Գինի վարդագույն/շիշ | | 0.00 |
| Սափոր վարդագույն 750մլ | շիշ | 12,500.00 |
| Կատարո վարդագույն 750մլ | շիշ | 8,500.00 |
| Տակառ վարդագույն 750մլ | շիշ | 8,500.00 |
| Հին Արենի Վարդագույն 750մլ | շիշ | 8,500.00 |
| | | |
| Նռան գինի | | 0.00 |
| Տնական նռան գինի 150մլ | բաժին | 2,000.00 |
| Տնական նռան գինի 750մլ | շիշ | 8,000.00 |
| Շամպայն | | 0.00 |
| Թարիրի ավանդական | շիշ | 40,000.00 |
| Քյոշ Ուլտրա | շիշ | 29,500.00 |
| Քյոշ Ռոզ | շիշ | 18,000.00 |
| Տակառ Ռոզե Էքստրա Բրուտ | շիշ | 9,500.00 |
| Տակառ Էքստրա Բրուտ | շիշ | 8,500.00 |
| | | |
| Գինի 150մլ | | 0.00 |
| Տակառ կարմիր 150մլ | բաժին | 2,400.00 |
| Տակառ սպիտակ 150մլ | բաժին | 2,200.00 |
| Տակառ վարդագույն 150մլ | բաժին | 2,200.00 |
| ***Ընդամենը*** | | ***1213710*** |
| ***10% սպասարկում*** | | ***121371*** |
| ***Ընդհանուր*** | | ***1335081*** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար – գլխավոր քարտուղար՝**
**Դավիթ Առաքելյան**

_______________________________
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ՊԱՈՒԼԱՆԵՐ» ՍՊԸ**
**ՀՀ, ք.Երևան, Բուզանդ փ. 17շ. 236**
**ՀՎՀՀ՝ 02694241**
**«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 2140006623190100**
**Տնօրեն՝**
**Էդգար Գալստյան**

_______________________________
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 03 » 02 2025թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/1 | Ներկայացուց-չական ծառայություններ /4237/ | 546000 | 546000 | 546000 | 900000 | 900000 | 900000 | 1400000 | 1400000 | 1400000 | 2000000 | 2000000 | 2000000 | 2000000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի**
**ղեկավար – գլխավոր քարտուղար՝**
**Դավիթ Առաքելյան**

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ՊԱՈՒԼԱՆԵՐ» ՍՊԸ**
**ՀՀ, ք.Երևան, Բուզանդ փ. 17շ. 236**
**ՀՎՀՀ՝ 02694241**
**«Բիբլոս բանկ Արմենիա» ՓԲԸ**
**Հ/Հ՝ 2140006623190100**
**Տնօրեն՝**
**Էդգար Գալստյան**

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 03 » 02 2025թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«03» 02 2025թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-25/9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն